Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

12348

338.98
U-11

1931

338.98:63 (
Կ- 11
30367-Կ2
Ա/ Բոլշևիկյան Կոլկոզով ցարդան

ՎՈՐՈՇՈՒՄ

Ա. Ս. Ֆ. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 1931 Թ. ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

1931 թ. գարնան գյուղատնտեսական կամպանիայի բայլշևիկյան տեմպերով նախապատրաստելն ու անցկացնելը վճռական նշանակություն ունի գյուղատնտեսական սոցիալիստական վերակառուցման նախագիծը իրականացնելու համար: Հնգամյակի յերրորդ տարու գարնան կամպանիան պետք է ամրացնի և լայնացնի գյուղատնտեսական արդյունաբերության սոցիալիստական ձևերը (խորհտնտեսություններ, կոլտնտեսություններ, ՄՏԿ), վճռական պայքար մղելով սահմանափակել և դուրս մղել կուլակությունը:

Գյուղատնտեսության արտադրության ուժերի արագացրած զարգացումը այդ հիմքի վրա պետք է ապահովվի 1931 թ. գարնան գյուղատնտեսական կամպանիայի ժամանակ, անցկացնելով հետևյալ միջոցառումները.

ա) վճռական կերպով լայնացնել բարձր արժեքավոր և սուպերֆոսֆատային կուլտուրաները, յուրացնելով նոր տարածություններ և կրճատելով հացահատիկային ցանքսերը.

բ) արդյունաբերական անասնաբուծությունը հասցնել հաստատուն զարգացման, ուժեղացնել կերի խոշոր արտադրությունը, վորը անասնաբուծության

ՀԱԽՀ—ՍՍՀԱ
Գոս. գրադարան
անվ. Ս. Մեսրոպյանի
Ա. ՄԵՍՐՈՊՅԱՆԻ ԱՆՎԱՆ

12610-57
13174-58
2010

պրոբլեմի համար կարևորագույն պայման է հանդիսանում.

գ) զգալի կերպով զարգացնել պտղաբուծությունն ու բանջարաբուծությունը, մանավանդ արդյունաբերական կենտրոնների շրջաններում և քաղաքների շրջակայքում:

Միաժամանակ սրա հետ 1931 թ. գարնան կամպանիայի ժամանակ ապահովել վոչ միայն ցանքային տարածությունների թվական լայնացումը, այլ և մեծ չափով բարձր վորակի ցուցանիշները. բերքատվության և կենդանու արդյունավետության բարձրացումը, աշխատանքի արտադրողականության աճումը, ինքնարժեքի իջնելը և մեքենայի ու կենդանի լծկան ուժի, նույնպես և գյուղատնտեսական գույքի ռացիոնալ գործումը:

Իր ժամանակին նախապատրաստության ծավալումը և 1931 թ. գարնանացանը մարտական տեմպով անցկացնելը, նույնպես և բանվոր դասակարգի լայն մասսաների, կոլխոզնիկների, բատրակ-չքավորների և միջակ գյուղացիության մասսաների մոբիլիզացիան անհրաժեշտ պայմաններ են ներկայացնում այս խոշոր-բաղդյան տնտեսական քաղաքական կամպանիան իրագործելու համար:

Կարևորագույն պայմանը գարնան կամպանիան անցկացնելու համար հանդիսանում է նույնպես ցանքսի նախագիծը իր ժամանակին խորհտնտեսություններին, կոլտնտեսություններին, գյուղերին և անհատ տնտեսություններին հայտնելը:

1931 թ. գարնան գյուղատնտեսական կամպանիայի իր ժամանակին նախապատրաստելու և անցկացնելու համար ԱԱՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը կարգադրում է.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. 1931 թ. գարնան գյուղատնտեսական կամպանիայի գարնանացանի տարածության ընդհանուր չափը ԱԱՖԽՀ վորոշել 1.506.000 հեկտար, վորից

ԱԱԽՀ	407.660	հեկտար
ՀՍԽՀ	338.850	»
ՎՍԽՀ	759.490	»

2. Առաջարկել ԱԱՖԽՀ մեջ մտնող հանրապետությունների ԺԿԽ, նույնպես Անդրհողժողկոմատին և Անդրկոլտնտեսկենտրոնին նախագիծը հասցնել ամեն մի խորհտնտեսության, կոլտնտեսության, գյուղին և անհատ տնտեսության հունվարի 15-ին, կամպանիային տալով լայն հասարակական-քաղաքական բնույթ, պարտադրելով ցանքսի պլանների քննությունը գյուղխորհուրդների նիստերում, գյուղացիների ընդհանուր հավաքույթներում, կոլխոզնիկների ժողովներում և արտադրական խորհրդակցություններում:

3. Առաջարկել ԱԱՖԽՀ մեջ մտնող հանրապետությունների ԺԿԽ շրջանային խորհուրդների համագումարում քննել շրջանում տարված գարնան գյուղատնտեսական կամպանիայի պլանը և նրան հաջող ացկացնելու կոնկրետ միջոցները մշակել:

II. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Վորոշել բամբակի ցանքի տարածությունը դրծիքավոր չափերով 250 հազար հեկտար, վորից

ԱՍԽՀ . . . . . 205·000 հկ.
ՀՍԽՀ . . . . . 25·000 հկ.
ՎՍԽՀ . . . . . 20·000 հկ.

Հում բամբակի մինչև բերքատվությունը հասցնել ԱՍՍԽՀ–ում մինչև 8,5 ցենտներ ամեն մի հեկտարին:

2. Ապահովել բամբակի ցանքսի առաջարկած նախագծի հաջող կատարումը, որը համեմատած 1930 թ. հետ ավելացված է 38 տոկոսով, արդերել բամբակի ցանքսերի համար ջրարբի հողերը ոռոգագործել հատիկային կուլտուրաների համար (բրինձ, քունջութ և սիմինդր):

3. Առաջարկել ԱՍՍԽՀ մեջ մտնող հանրապետությունների ԺԿԽ վճռական միջոցներ ձեռք առնել հիշյալ կուլտուրաները դուրս գցելու բամբակի ռայոններից, նույնպես ամառային ջուր տրամադրել այս շրջաններին, բացառապես բամբակի տարածությունների համար:

Այն դեպքում, եթե բամբակի ցանքսին տրամադրված տարածությունները ինքնակամ ցանված են հացահատիկային կուլտուրայով, ԱՍՍԽՀ մեջ մտնող հանրապետությունների ԺԿԽ առաջարկել վճռական միջոցներ ձեռք առնել և նորից վարել տարածությունները բամբակի համար և նրանց, ովքեր դիմադրում են այս կարգադրությանը, քրեական պատասխանատվության ենթարկել:

4. Առաջարկել Անդրհողժողկոմատին, Անդրջրտնտեսությանը և հանրապետությունների ԺԿԽ ջրից ոռոգելու գործը կանոնավորել տեղերում և վոռոզման կամպանիայի ղեկավարությունը բարելավել:

ա) այն բոլոր շրջաններում, ուր կան բամբակի ջրարբի տարածություններ, կազմակերպել շրջանային

ջրտնտեսություններ և նրանց աշխատանքի փաստացի սկիզբը ապահովել աշխատավորների լրացումով հունվարի 15–ից վոչ ուշ.

բ) վճռական միջոցներ ձեռք առնել անհրաժեշտ կարգապահություն մտցնելու համար ջրից ոռոգելու գործում, մաքառելով ջուրը անօրեն կերպով գործադրելու դեմ, նույնպես դեպի վոռոզման սիստեմն ունեցած անփույթ վերաբերմունքի դեմ.

գ) ամեն տեղ գիշերային վոռոզումն ապահովել:

5. 1931 թ. փետրվարին հայտարարել վոռոզման ցանցի մաքրելու ամիս, այս նպատակի համար աշխատանքի քաշելով դյուղբնակչությունը, պարտադրել Անդրջրտնտ. և ԱՍՍԽՀ մեջ մտնող հանրապետությունների ԺԿԽ ապահովել այս աշխատանքի ուղիղ ղեկավարությունը:

6. Պարտավորել Անդրջրտնտին և հանրապետությունների ԺԿԽ վերջացնել բոլոր ջրհանների, նույնպես վոռոզման սիստեմների վերանորոգումը վոչ ուշ քան այս վորոշումը հայտարարվելուց ամիս և կես հետո:

7. Առաջարկել Անդրհողժողկոմատին, ՊԲԿ–ի լիազորին և Տրակտորկենտրոնի Անդր. բաժանմունքին միջոցներ ձեռք առնել բոլոր տրակտորները կենտրոնացնելու ուշ աշնան վարերի վրա: Հանձնարարել ԱՍՍԽՀ–ի մեջ մտնող հանրապետությունների ԺԿԽ բամբակի շրջաններում մոբիլիզացիայի ենթարկել կոլտնտեսությունների և անհատ տնտեսությունների բոլոր կենդանի լծկան ուժը փոխադրել նրան նույնպես ուշ աշնան վարերի վրա, այն հաշվով, վոր վերջինս վերջացած լինի հունվարի 20–ից վոչ ուշ, իսկ ձմռան տրաքը՝ փետրվարի 1–ից:

8. Առաջարկել ԱՍՍԽՀ մեջ մտնող հանրապետությունների ԺԿԽ, Տրակտորկենտրոնի Անդր. բաժան-

մունքին, Անդրդյուղմիության և Անդրդյուղմատակարարման անմիջապես վերանորոգման յենթարկել բոլոր յեղած գյուղատնտեսական մեքենաները, շարքացանները, կուլտիվատորները և իր ժամանակին բաժանել շրջաններին լիովին ապահովել պահեստի մասերով և վառելանյութով, այն հաշվով, որ ապրիլի 10-ին 110·000 հեկտար տարածության վրա ավելի բամբակի շարքացանի անցկացումը, գործադրելով համապատասխան պարարտացում, դրան հետևող մեքենայական մշակում, ըստվորում այդ տարածությունների 20 տոկոսը պետք է մշակված լինի տրակտորներով:

9· Ցանքսի ավարտման վերջին ժամկետ նշանակել մայիսի 10-ը, վորովհետև վերջին յերկու տարվա փորձը և պրակտիկան ցույց տվին, որ բամբակի ուշացած ցանքսը պատճառ է հանդիսանում նվազ բերքատվության:

Առաջարկել Անդրհողժողկոմատին, որ ՊԲԿ լիազորի, հանրապետությունների հողժողկոմատների և բամբակի կոոպերացիայի հետ միասին շրջաններում ցանքսի սկիզբն ու վերջը վորոշել, հայտարարելով համապատասխան վորոշում փետրվարի 15-ից վոչ ուշ:

III. ԱՅԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

1· Լայնացնել ծխախոտի ցանքսի տարածությունը 8,7 հազար հկ· հասցնելով նրան մինչև 30·000 հկ· վորից

ԱՍԽՀ	1·360 հկ
ՀՍԽՀ	2·650 հկ
ՎՍԽՀ	25·990 հկ

2· Լայնացնել կենաֆի և կանատնիկի ցանքսի տարածությունը 21,8 հազար հկ· հասցնելով նրան մինչև 30·000 հկ· վորից

ԱՍԽՀ	16·000 հկ
ՀՍԽՀ	—
ՎՍԽՀ	14·000 հկ

3· Ռամիի ցանքի տարածությունը լայնացնել մինչև 8·000 հկ·, վորից

ԱՍԽՀ	0,5 հազար հկ
ՀՍԽՀ	—
ՎՍԽՀ	7,5 հազար հկ

4· Լայնացնել չաքարի ճակնդեղի ցանքսի տարածությունը մինչև 1,8 հազար հկ·, վորից

ԱՍԽՀ	—
ՀՍԽՀ	0,7 հազար հկ
ՎՍԽՀ	1,1 հազար հկ

5· Սոյայի ցանքի տարածությունը հասցնել մինչև 52·000 հկ·, վորից

ԱՍԽՀ	2·000 հկ
ՀՍԽՀ	—
ՎՍԽՀ	50·000 հկ

6· Միաժամանակ ապահովել ՎՍԽՀ սոյայի շարքամիջի ցանքսի տարածությունը, հավասարեցնելով նրան 50·000 հկ· համատարած ցանքսի:

7· Տրամադրել 1·100 հկ· ցանքսի տարածություն գետանուշի համար, վորից

ԱՍԽՀ	0,2 հազար հկ
ՀՍԽՀ	—
ՎՍԽՀ	0,9 հազար հկ

8· Մնացած տեխնիկական կուլտուրաներին (բունջուք, մուշ, գյանադերչակ, արևածաղիկ և այլն) հատ-

կացնել մինչև 27·450 հկ· տարածություն, բաժանելով ըստ հանրապետությունների համաձայն Անդրհողժողկոմատի նախագծի:

IV· ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1· Ապահովել խաղողի նոր այգիների տնկումը 2·500 հեկտար տարածության վրա:

2· Մրգատու տնկարանների տարածությունը վերջնել 6·500 հեկտար:

3· Ապահովել թեյի տնկարանների հիմնադրությունը 15·000 հկ· տարածության վրա, բացի դրանից 1931 թվի համար նախապատրաստել 5·000 հկ·:

Ծանոթություն·— Բոլոր տնկարանների հատկացրած տարածությունները բաժանել հանրապետությունների մեջ համաձայն Անդրհողժողկոմատի նախագծի:

V· ԳԱՐՆԱՆԱՅԱՆ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1· Գարնանացան հացահատիկային կուլտուրային հատկացնել 879,5 հազար հեկտար, որից

ԱՄՍՀ	90,6 հազ· հկ·
ՀՍՍՀ	241,5 հազ· հկ·
ՎՍՍՀ	547,4 հազ· հկ·

2· Հիմնվելով գյուղատնտեսական սոցիալիստական սեկտորի հետագա զարգացման, ռացիոնալացման և գյուղատնտեսական արտադրության տեխնիկական վերակազմման վրա, հացնել մինչև բերքատվությունը հատիկային կուլտուրայի նկատմամբ 9 տոկոսից վոչ պակաս, իսկ կոլտնտեսություններում՝ 15 տոկոսի:

3· Հանձնարարել Հողժողկոմատին և ԱՍՍՀՀ մեջ մտնող հանրապետությունների ԺԿՀ

ա) վերջացնել ուշ աշնան վարը գարնանացանի համար վոչ պակաս 160 հազար հկ·տարածության վրա·

բ) 100 տոկոսով անցկացնել սերմացումը·

գ) ԱՍՍՀՀ-ի մեջ յեղած բոլոր հացահատիկային ցանքսերի 15,3 տոկոսը գարձնել շարքացան, որից՝

ԱՄՍՀ	33,1 տոկոս
ՀՍՍՀ	16,6 տոկոս
ՎՍՍՀ	11,9 տոկոս

4· Պարտադրել Անդրհողժողկոմատին և ԱՍՍՀՀ մեջ մտնող հանրապետությունների ԺԿՀ անմիջապես լայն կամպանիա սկսել և հատիկային սեսորները մոբիլիզացիայի յենթարկել, նշանակելով հետևյալ ժամկետները հատիկային ֆոնդի հավաքումը վերջացնելու համար· կոլտնտեսությունների— 75 տոկ·առաջադրությունը հունվարի 15-ին, մնացածը— մարտի 1-ին: Անհատ տնտեսություններում վերջացնել ապահովագրված ֆոնդերի հավաքումը հունվարի 15-ին:

5· Կոլտնտեսություններ կազմակերպելու և նոր անդամներ ընդունելու հետ միասին ընդհանրացնել հատիկային ֆոնդերը և հատիկային փոխատվություն սատանալ կոլտնտեսության մեջ մտնող նոր անդամներից:

Անդրհողժողկոմատը և ԱՍՍՀՀ մեջ մտնող հանրապետությունների ԺԿՀ մինչև հունվարի 15-ն ամեն տեղ պետք է ստուգեն հին կոլտնտեսություններից ստացված հատիկային ֆոնդերը և նրանց պահելու կարգը:

VI. ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Բանջարանոցների և բախչաների տարածությունները լայնացնել 19.850 հեկտարով, հասցնելով նրանց մինչև 50.950 հեկտար, որից՝

ԱՍԽՀ	25.050 հկ.
ՀՍԽՀ	5.900 հկ.
ՎՍԽՀ	25.000 հկ.

2. Պարտադրել Անդրհողժողկոմատին (վնասատուների դեմ կռվող ակցիոներական ընկ. Անդր. բաժանմունքին) 12.000 հկ. տարածության վրա կռիվ մղել բանջարանոցային կուլտուրաների հիվանդությունների և վնասատու միջատների դեմ ճմռան և գարնան շրջաններում:

3. Լայնացնել կարտոֆիլի ցանքի տարածությունը 28.800 հեկտարով, հասցնելով նրան մինչև 59.000 հեկտար, որից՝

ԱՍԽՀ	19.000 հկ.
ՀՍԽՀ	20.000 հկ.
ՎՍԽՀ	20.000 հկ.

4. Առաջարկել «Զակալոդոսոյուզին» ապահովել այս տարածությունը համապատասխան ցանքանյութերով:

VII. ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՑԵՎ ԿԵՐԻ ԲՈՒՅՍԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Տալով բացառիկ նշանակություն անասնաբուծության զարգացմանը, որը ԱՍՖԽՀ գյուղատնտեսության մեջ աչքի ընկնող տեսակարար կշիռ ունի, որոշել անասունների ընդհանուր աճումը, 1930 թվի հետ համեմատած, 5,5 տոկ., խոշոր յեղջյուրավոր անասուններ— 4,5 տոկոս, վոչխարներ— 7,6 տոկոս և խոզեր— 53 տոկոս:

2. 1931 թվի համար սովտնտեսությունների անասունների թիվը սահմանել հետևյալ սիստեմով. «Սկոտովոդ»— 50 հազար գլուխ, «Ովցեվոդ»— 100 հազար գլուխ և «Սվինովոդ»— 9 հազար խոզամայրեր:

3. Առաջարկել Անդրհողժողկոմատին և հանրապետությունների ԳԿԽ, անասունների աճումը ապահովելու և նրա արդյունավետությունը բարձրացնելու համար՝

ա) խիստ կոնտրոլ նշանակել ԿԳԿ-ի, ԱՍՖԽՀ-ի ԺԿԽ վորոշումները կատարելու 1931 թ. նոյեմբերի 1-ից (C. З. СССР 1930 г. № 57, ст. 599), վորով առաջարկվում է վճռական պայքար մղել անասունների ավազակային սպանությունների դեմ.

բ) կերի կուլտուրաների տարածությունը հասցնել մինչև 115,9 հազար հկ., որից ցանովի խոտ— մինչև 88,7 հազար հկ. (1930 թ. աճումից 63,8 հազար հկ. ավելացած) և պտղարմատ՝ մինչև 14 հազար հկ. (1930 թվից 11,2 հազ. հկ. ավելի), որից՝

ՑԱՆՈՎԻ ԽՈՏԵՐ	
ԱՍԽՀ	32 հազ. հկ
ՀՍԽՀ	20 հազ. հկ
ՎՍԽՀ	36,7 հազ. հկ
ՊՏՂԱՐՄԱՏՆԵՐ	
ԱՍԽՀ	5 հազ. հկ
ՀՍԽՀ	5 հազ. հկ
ՎՍԽՀ	4 հազ. հկ

8. Միջոցներ ձեռք առնել հիմնապես բարելավելու արոտատեղիները (պարարտացում, խիստ կարգ մտցնել, վոր արոտատեղիքն ողտագործեն անասունների ա-

ռանձին տեսակները, արածացման ժամկետներ և արոտատեղիների բեռնավորման նորման):

VIII. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Առաջարկել Տրակտորկենտրոնի Անդրբաժանմունքին կազմակերպել գարնան գյուղատնտեսական կամպանիայի սկզբին 18 նոր ՄՏԿ (MTC), հասցնելով ԱՍՖՍՀ-ում աշխատող ՄՏԿ մինչև 24-ի և պարտադրել 213 հազար հկ. համայնացանքս տարածություն վարել, ի թիվս վորի 163 հազար հեկտար բամբակի ցանքսի տարածություն:

2. Պարտադրել Տրակտորկենտրոնի Անդր. բաժանմունքին և Անդրկոլտնտկենտրոնին վերջացնել 75 տոկ. վոչ պակաս տրակտորների վերանորոգումը փետրվարի 15-ին և մարտի 15-ին մնացածների վերանորոգումը, ժամանակին ապահովելով նրանց անհրաժեշտ ինվենտարով:

3. Առաջարկել Անդրհողժողկոմատին, Տրակտորկենտրոնի Անդր. բաժանմունքին և Անդր. Կոլտնտկենտրոնին վճռական միջոցներ ձեռք առնել տրակտորների արդյունավետ գործադրման համար, այնպես, վոր ամեն մի տրակտորի աշխատանք մեկ սուտկի մեջ հասնի 20-ից վոչ պակաս ժամի:

4. Պարտադրել Տրակտորկենտրոնի Անդր. բաժանմունքին, Անդրդյուղմիություններին, Անդրկոլտնտկենտրոններին միջոցներ ձեռք առնել մաքսիմալ կերպով ոգտագործելու տեղերում գյուղատնտեսական ինվենտարը և կենդանի լծկան ուժը տրակտորների հետ միասին ի նկատի ունենալով տրակտոր ինվենտարի պակասությունը:

5. Պարտադրել Անդրհողժողկոմատներին, Անդրկոլտնտկենտրոններին, Անդրդյուղմիություններին և ԱՍՖՍՀ մեջ մտնող հանրապետությունների ԺԿՆ ապահովել վորքան կարելի յե կենդանի լծկան ուժի և գյուղտնտ. ինվենտարի ոգտագործումը, լայն կերպով սոցմրցում տարածելով կոլեկտիվների և անհատ տնտեսությունների մեջ:

6. Բարդ ինվենտարի վերանորոգումը սովտնտեսություններում և կոլտնտեսություններում, վորոնք սեփական արհեստանոցներ չունեն, հանձնել Տրակտորկենտրոնի Անդր. բաժանմունքին, իսկ չքավոր և միջակ անհատ տնտեսությունների ինվենտարի վերանորոգությունը հանձնել չրջկոոպմիություններին Անդրդյուղմիության հսկողության տակ:

7. Պարտադրել Անդր. ԺՏԳՆ (BCHX) գյուղատնտեսական ինվենտարի վերանորոգման համապատասխան, ապահովել անհրաժեշտ նյութերով վերանորոգիչ կամպանիայի ծավալումը:

8. Առաջարկել ԱՍՖՍՀ մտնող հանրապետությունների ԺԿՆ, Անդրդյուղմիության և Անդրկոլտնտկենտրոնին սիստեմատիկորեն ստուգել չրջզործկոմների, կոոպերացիայի և կոլտնտեսության սիստեմը, վորով մոբիլիզացիայի յեն յենթարկվելու ներքին ռեսուրսները, ապահովելու համար իր ժամանակին ի կատար ածելու գյուղատնտեսական ինվենտարի վերանորոգման նախագծերը:

IX. ՍՈՎՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Գարնանացանի տարածությունը ԱՍՖԽՀ-ի սովտնտեսություններում հասցնել մինչև 82.431 հեկտար, վորից՝

ԱՍԽՀ	30.424 հկ
ՀՍԽՀ	11.529 հկ
ՎՍԽՀ	31.478 հկ

2. Առանձին սովխոզ սխեմաների նկատմամբ հաստատել հետևյալ առաջադրությունները գարնանացանի համար. «Սկոտովոդին»— 6.341 հկ. (առանց անցած տարիների խոտացանքի), «Ովցեվոդին»— 1.050 հկ., «Սվինովոդին»— 1.740 հկ. Նովլուբարեստին—10.500 հկ. (դրանց թվում ռամա— 3.000 հկ., կենդիր— 1.000 հկ., կենաֆ և կանատնիկ— 3.500 հկ.), Սոյուզսախարին— 1.068 հկ, Սոյուզտաբակին— 2.300 հկ., (վորից ծխախոտ— 1.550 հկ.), Զակպլոդոովոչին— 785 հկ. բանջարանոց, սպառկոոպերացիային (քաղաքին կից սովտնտեսություններում)— 7.204 հկ. (դրանց թվում բանջարանոցներ և բախչաներ— 4.493 հկ. Լենկոնեխսրյոյին—649 հկ., Սեմենովոդտրեստին— 3.149 հկ. (դրանց թվում բանջարանոցային— 150 և կերի— 1.800 հկ.), Սովխոզխլոպկին—27.750 հկ. (վորից՝ բամբակ— 22.250 հկ. և խոտեր— 5.500 հկ.) և հանրապետական սովտնտարեստներին— 10.270 հկ., (վորից՝ ՀՍԽՀ— 4.280, ՎՍԽՀ— 3.990):

3. Առաջարկել Անդրհողժողկոմատին և հանրապետությունների ԺԿԽ ապահովել այս առաջադրության կատարումը իր ժամանակին, հատկացնելով սովտնտեսություններին անհրաժեշտ հողային ֆոնդեր:

4. Առաջարկել Անդրհողժողկոմատին անմիջապես սկսել մրգաբանջարային և թռչնաբուծական սովտնտեսությունների կառուցումը Անդրհողժողկոմատի սխեմով, վորոշելով 1931 թ. հետևյալ հիմնական արտադրական առաջադրությունները՝ Մրգաբանջարային սովտնտեսություններում 3000 հկ. մրգատու տնկարանների հիմնումը և 2.000 հկ. բանջարանոցներ: Թռչնատնտեսություններում աճող թռչունների թիվը հասցնել մինչև 150.000-ի:

5. Առաջարկել Անդր. ՀԺԿ ապահովել սուբտրոպիկական սովտնտեսությունների արագացրած շինարարությունը ՎՍԽՀ-ում:

X. ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Ի նկատի ունենալով կոլեկտիվացման ասպարիզում ձեռք բերած հաջողության աստիճանը ԱՍՖԽՀ-ում և չքավոր ու միջակ մասսաների նոր հոսանքը դեպի կոլտնտեսությունները, 1931 թ. ապահովել գյուղացիական տնտեսությունների ընդգրկումը կոլտնտեսությունների մեջ ԱՍՖԽՀ-ում միջին թվով 20—25 տոկոս:

Բամբակացան շրջաններում, ուր գալիք գարնանացանի կամպանիայի ժամանակ նվաճված կլինի արտադրության պրոցեսի մեքենայացումը, ապահովել 1931 թվին այս շրջանների տնտեսությունների ընդհանուր թվի 50 տոկոսից վոչ պակաս մասի ընդգրկումը կոլտնտեսությունների մեջ:

2. Առաջարկել Անդր. ՀԺԿ, Անդրկոլտնտակենտրոնին, և ԱՍՖԽՀ-ի մեջ մտնող հանրապետությունների ԺԿԽ ձեռք առնել վճռական միջոցներ, կոլտնտեսություններում կազմելու արտադրական նախաձեռներ գարնան գյուղատնտեսական կամպանիայի համար, մոբի-

(4463)
131174-58
(12610-52)

ֆիզացիայի յենթարկելով այդ նպատակի համար մաքսիմալ քանակով գյուղատնտեսական ուժեր:

3. Առաջարկել Անդրկոլտնտկենտրոնին ապահովել կոլտնտեսությունների վարչությունների լայն հաշվետվությունը կոլխոզնիկների և անհատների ընդհանուր ժողովներում, ծավալելով ինքնաքննադատության այդ հաշվետվության շուրջը, կապել այդ կամպանիան դոյություն ունեցող կոլտնտեսությունների նպատակների և կոլշարժման հեռավոր ապման հետ:

4. Անդրհողժողկոմատին, Անդրկոլտնտկենտրոնին և հանրապետության ժողկոմխորհներին, հողաբաժանման և հողանշման աշխատանքներն ավարտել վոչ ուշ, քան ցանքսի սկզբնավորությունից յերկու շաբաթ առաջ:

5. Պարտադրել Անդրկոլտնտկենտրոնին դեկադայի ընթացքում մշակել կոնկրետ միջոցառումներ վճռապես լավացնելու աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսություններում և բարձրացնել այդ հիման վրա աշխատանքի արտադրողականությունը, լայն կերպով գործադրելով հարվածայնություն, սոցմրցում և այլ միջոցներ:

6. Պարտադրել Անդրկոլտնտկենտրոնին ավարտել կոլտնտեսություններում ֆուրաժի ֆոնդերի առանձնացումը մինչև փետրվարի 1-ը:

7. Հանձնարարել Անդրկոլտնտկենտրոնին մշակել միջոցառումների կոնկրետ սխեմա, ապահովելու իր ժամանակին կոլխոզներում աշխատանքի կատարումը ինտենսիվ կուլտուրաների միջոցով, ոգտագործելով այլ կոլտնտեսությունների ազատ բանվորական ուժը:

XI. ԿԱԴՐԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Գարնան գյուղատնտեսական կամպանիայի համար կադրերի պատրաստման ապահովումը բացառիկ հարվածային աշխատանք է հանդիսանում, վորը վըճռական նշանակություն ունի խնդիրների հաջող լուծման համար, վորոնք դրված են գյուղատնտեսական կամպանիայի առաջ: Սրանից յելնելով պարտադրել Անդրհողժողկոմատին, Անդրկոլտնտկենտրոնին, Տրակտորկենտրոնի Անդր. բաժանմունքին, Անդրգյուղմիությունների և ԱՍՖԽՀ-ի մեջ մտնող հանրապետությունների ԺԿԽ ուշադրության կենտրոն դարձնել կազմակերպիչներ պատրաստելու գյուղատնտեսական բոլոր ճյուղերի նկատմամբ գարնանացանի կամպանիայի համար:

2. Պարտադրել Անդրհողժողկոմատին և ԱՍՖԽՀ-ի մեջ մտնող հանրապետությունների ԺԿԽ գարնանացանի սկզբին, ժամկետից չուտ բաց թողնել ԲՈՒՀ-երից 600-ական մարդ և տեխնիկումներից— 1300 մարդ, այն պայմանով, վոր նրանց ըստ շրջանների և մասնագիտությունների բաժանման կոնկրետ պլանը մշակված և ներկայացված լինի Անդրժողկոմխորհի հաստատման համար 1931 թ. հունվարի 15-ից վոչ ուշ:

3. Պարտադրել Անդրհողժողկոմատին, Անդրկոլտնտկենտրոնին, Տրակտորկենտրոնի Անդր. բաժանմունքին, Անդրշրջկոլտնտեսություններին և ԱՍՖԽՀ-ի մեջ մտնող հանրապետությունների ժողկոմխորհներին, գյուղատնտեսական զանազան ճյուղերին վերաբերյալ 1—1½ ամիս տևող մասսայական վորակավորման կուրսերից բաց թողնել մինչև 25·000 մարդ, ներկա-

304

յացնելով փետրվարի 1-ից վոչ ուշ Անդրժողկոմխորհին անցած կուրսի պլանն ըստ մասնագիտությունների և շրջանների:

ԱՍՑԽ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝ Շ. ԵԼԻԱՎԱ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Գոս. Պետ. Գրադարան
ՍՍՀ ԳԱ Գրադարան
Ա. Մեսրոպի անվան

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0045782